Ալեքսանդր Շիրվանզադե

Շռայլը

Նա անսահման բարի էր, որպեսզի լիներ խելոք՝ ամբոխի աչքում: Նա անհասկանալի խելոք էր, որպեսզի համարվեր խոհեմ՝ չհասկացողների կողմից: Միայն մի ժառանգություն ուներ իր հայրերից ու նախահայրերից ստացած: Դա դրամ չէր, ո՛չ գույք և ոչ կալվածք, այլ միայն մի ոչինչ բան սիրտ և իբրև շռայլ զավակ, առանց երկար մտածելու, անմտորեն, այդ ժառանգությունը նա նվիրեց իր մերձավորներին և հեռավորներին: Եվ մեռավ նա վերին ծայր չքավորության մեջ: Նրան համարեցին անխոհեմ. ինչո՞ւ: Որովհետև նա եղավ վատնող ժառանգ և շռայլեց անհաշիվ իր ժառանգությունը: Բայց նա թողեց մի մեծ ժառանգություն բարի հիշատակ, ջերմ հիշատակ, իր ծանոթների ու բարեկամների սրտում: